



ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Բ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄ.-ԴԵԿՏԵՄ. 1940 ԹԻԻ 11-12



Ուղղուած դէպի Կիւսնքի ժայռամուտք
(Տարուան վախճանին առթիւ)

ԿԱՐԵԻՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

1.— Մեր նշանաբանը.— Էական կեանքում մեք միտքիւմ, ոչ հական կեանքում մեք ազատքիւմ, իսկ անկե բանի մեք սեր: — Օգոստինոս

2.— Եպոսակը.— Ծառայել Քրիստոսի արագան դասին: Պայտարիչ մոշորութեանց դիմ. Տարածել Աւետարանի նշանաբանը. Քրիստոսի ձրի փրկութիւնը փաշարար արեան շնորհիւ: Եւշեղ ապաշխարութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտքիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Միել փրկուածները արագործուած կեանքի եւ այսպիս պատրաստել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3.— Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Աբ. Գրոց Աստուծոյ ներշնչեալ, անսխալական եւ հաւաստի ու կեանքի կանոնը ըրալուն: (2) Ամենասուրբ Երրորդութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Աբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Ծնունդի: (6) Սրբագործութեան եւ Աբ. Հոգիով մկրտուած կեանքի: (7) Մեր Տիրոջ կրկին, անձաւք վերադարձին: (8) Մեղեքներու յարութեան: (9) Ընդհանուր դասասանի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ թագաւորութեան: (11) Երկինքի եւ դոմիսի: (12) Սասանային անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Սրբաւերներուն համար յաւիտեական կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտեական տանջանքի: (14) Եկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4.— Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերք, հայերէն եւ հայաստա թուրքերէն լեզուներով:

5.— Աշխարհիկ ժանուգուներ չեն ընդունուիր:

6.— Թոյուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուրսէն ելողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն թերթին ուղղութիւնը եւ դրկուած յոյուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7.— Թերթիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական ճիշդերու համար երբ անոնք պարզապիս վեճեր յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8.— Չհրատարակուած յոյուածները եւ չեն վերադարձուիր:

9.— Բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ վեց ամիսէն նուազ պայմանաժամով բաժանորդագրութիւն չընդունուիր:

10.— Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՍՐԱՅ.Գ.ԻՐԵՆԵՐ

ԿԸ ԽՆԴԻՐՈՒԻ մեր յարգելի յոյուածագիրներէն ու գրեն կարն, դիւրընթեռնելի եւ մեղանով: Երկարաւունջ յոյուած ներելի է երբ ան պատմութիւն է, կամ մասնաւոր ուսումնասիրութիւն մըն է եւ հնարաւորութիւն կայ մաս առ մաս դնելու զայն:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԹՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամիստեր' Խ. Թ. ՍԱՐԳՍԻ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ { Վեր. Խ. Թ. ՍԱՐԳՍԻ
Վեր. Թ. ԿՈՏԱՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ
Պր. Կ. Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բ. ՏԱՐԻ ՆՈՅԵՄ.-ԴԵԿՏԵՄ. 1940 ԹԻԻ 11-12

ՄԱՐԴԸ ԻՐ ԱՆԿՈՒՄԻՆ ՄԷՁ

Մեկէ աւելի անգլերէն թերթ կ'ստանանք: Երբեմն զբաղած ըլլալով՝ զանոնք ուշի ուշով կարելի չըլլար աչիւն անցնել եւ այդ պատճառաւ ալ կարգ մը բաներ մեր ուշադրութեան կը վերադառնան: Պարբերաբար զանոնք կրկին կը պարզենք, այն ասեմք մեր ուշադրութեան վերադառնալով: Բաներ աչիւն կը զարնեն: Այսպէս երբ Բանի մը տարի առաջուան թերթ մը կը պարզենք, պատկեր մը մեր ուշադրութիւնը գրաւեց, իսկ պատկերին տակի բացատրութիւնը մեզ մեծապէս տպաւորեց: Ի՞նչ էին պատկերն ու բացատրութիւնը: Անտառային:—

Երթասաւաղ աղջիկ մը իր մօրք հետ ծովափեայ պոստի մը ելած են. վայրը ամառի էր, որովհետեւ մարդիկ հոն շատ չէին յանդիմար: Յանկարծ ժայռերուն հետեւն նիհար ու բարձրահասակ կին մը՝ ցնցոտիներու մէջ, մազերը ցան ու ցիւլ, մեջքը կապած Բանի մը փամփուռներ՝ իրենց դիմը կը ցցուի: Խելաւոր երեւոյթով այս կինը իրենց սարսափահար աչիւններուն առջեւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ կ'աղաղակէ. «Ծովը փառաւոր, արեւը փառաւոր, աշխարհը փառաւոր, բայց մարդը գեշ է, մարդը կեղծ է», եւ աչիւններն կ'անհետանայ:

Ամբողջ օրը, խելակորոյս այդ կնկան արտասանած հանգիստաւոր խօսքերը կարծես մեր ականջին կը հնչէին. եւ իբրեւ թէ մեզի հանգիստաւոր ըլլար, իր դիմը մեր երեւակայութեան առջեւ կը յամառէր մնալ: «Ո՞վ գիտէ, քսիւն մենք մեզի, խելը կ'իյնը ինչե՞ր Բանի մը Բանի էր գեշ եւ կեղծաւոր մարդոց ձեռքին: Անխիղճ եւ անօրէն մարդիկ, հազար ու մէկ անուշաբաններով լեցուն այս աշխարհի մէջ իր կեանքը օգնողի նման դառնացուցեր, եւ խելագարի նման զինքը անապատ ու ամառի տեղեր փոխելով՝ իր կեանքը զոհաբանացուցեր եւ բռնաբանացուցեր էին»: Սակայն Բանի՝ բիրտաւոր գոհեր կան այսպէս որոնք անմեղօրէն կը տառապին անօրէն մարդոց ձեռքին: Աստուած իմ Դուն որ Բան պատկերովդ ստեղծեցիր մարդը, ի՞նչ անաւոր անկում մը ունեցած է:

Պէտք կ'ա՞ր, սակայն, վկայութեան կոչելու խելագարած կին մը հաստատելու, թէ մարդը եղծանած է անհամաչափ ըլլալու աստիճան: Տերք ինքը կը վկայէ մարդուն համար եւ կ'արտասանէ սա՛ հանգիստաւոր խօսքեր. «Աստուած երկրի վրայ նայեցաւ, եւ անաւորապէս կ'անկում էր... եւ անխառնութեամբ լեցուած, վասնզի երկրի վրայ անհեղինակ մարմին իր նամբան արարեցաւ»:

եր»: Նախ ապականաձ եր մարդը եւ իր պատճառաւ ապականաձ եր երկիրը: «Արդար մը չկայ ոչ մէկ մը. ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան. . . իծերու բոյն կայ անոնց շրջուններուն տակ, իրենց լեզուովը նենգաւոր են, անոնց բերանը անեծով եւ դառնութիւնով լեցուն է, անոնց ոտները արագ են արիւն թափելու, կործանում եւ թուառութիւն կայ իրենց նամբաներուն մէջ»: Ասկէ աւելի վառ գոյնով մը, ասկէ աւելի զօրաւոր լեզուով մը մարդուն իսկական վիճակը նկարագրել կարելի չէ:

Ո՞րն սա երկիրն դրախտաձայր, ինկաձ մարդուն միջոցաւ ինչպէ՞ս վերածուեցաւ անապատի՞ փուռ եւ տառապ թուցնող: Արդարութեան եւ խաղաղութեան վայրը լեցուեցաւ ասելութեամբ եւ զուլումով: Արարչագործութեան գլուխ գործոցն էր մարդը ու ամէնէն փառաւորը, սակայն ինչպէ՞ս եղաւ ամէնէն անփառունակը: «Ամէնը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսաձ են»: «Արդարեւ, ծովը փառաւոր, արեւը փառաւոր, աշխարհը փառաւոր, սակայն մարդը գէշ է, մարդը կեղծ է»: Այս է իսկուր իրականութիւնը: Մեղքը աւերեց եւ փառքեց ամէն ինչ որ բարի էր, նեմարիտ էր մարդուն մէջ:

Ստատման մեղքին միջոցաւ կը շարունակէ դեռ իր աւերիչ գործը ընտանեկան յարկերէն ներս, ազգերու եւ ժողովուրդներու մէջ: Ի՞նչ տուներ փայլեալ է ան, ի՞նչ ազգեր կործանեալ է անիկա, գահեր տապալեալ է, շէն փառքներ ամայացուցեալ, ուրախութիւնը արցունքի եւ սուգի փոխեալ է ու Աստուծոյ ստեղծաձ այս գեղեցիկ աշխարհին համէն ու հոսք փախցուցեալ է:

Այսօր մեր աշխարհուն առջեւ տեղի ունեցող սպանդը դժոխային մեղեկանելով, եւ իր առթաձ անհաւուելի եւ անաւոր թուառութիւնները, բարոյական անկումի մասնուաձ մարդուն գործն է: Որովհետեւ մարդը՝ այդ բուձալից տարրը, որ մեղք կը կոչուի, իր մէջը ընդունեց: Այդ մեղքը դարձաւ Պանգորայի առասպելական տուփը, որ ամէն չարիք կը պարունակէր մէջը, թափուելու համար մարդոց գլխուն: Երբ մարդը այսպէս մեղքով եղձանեցաւ, սիրտն ալ ծնեցաւ, ալլեւս մարդուն սիրտը իր Աստուծոյն հանդէպ ալ ուղիղ չէր: Մտքն հետեւեցաւ փայլերը, մարդիկ ալլեւս Աստուծոյն առջեւ շիտակ չէին փայլեալ եւ այդ շեղումը նեղացուց զինքը իր Աստուծոյն եւ կեանքէն՝ միեւնոյն աստեւ:

Սակայն մարդուն համար վերականգնումի յոյս չկա՞յ ալլեւս: Ան իր Ֆիզիքական եւ հոգեկան կործանումէն կրնա՞յ փրկուիլ:

— Անտարակոյս. Քրիստոս երկինքէն յայտնուաձ է նիւթ այդ նպատակին համար: Այսինքն՝ վերադարձնելու մարդուն ինչ որ կորսնցուցաձ է մեղանշելով: Անոր համար առաքեալը կ'ըսէ. «Մեղքին վարձք մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտեական կեանք է մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձնոխով»: Կը փափաքէի՞ր որ առաքեալը աւելի յստակ եւ զօրաւոր բան մը ըսէր, ուրեմն մտիկ ըրէ. «Ուրպէս զի անոնք ալ (ընտելուները) հասնին այն փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է ՅՈՒՆՏԵՆՈՒԿԱՆ ՓՈՌՔՈՎ» (Բ. Տիմ. 2. 10): Թող մարդը խոստովանի իր մեղքը Քրիստոսի եւ վստաքի Անոր՝ փրկութեան համար, անա Քրիստոս պիտի վերադարձնէ իրեն կորուսաձ այդ փառքը: Այն աստեւ մեղք եւ բոլոր հրեշտակներ միաձամուռ պիտի աղաղակենք. «Ծովը փառաւոր, արեւը փառաւոր, աշխարհը փառաւոր, սակայն փրկուաձ մարդը աւելի փառաւոր ՅՈՒՆՏԵՆՈՒԿԱՆ ՓՈՌՔՈՎ»:

Խ. Թ. Ս.

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ՀՈԳԻՆ

(Հոռվմ. 7. 24, 25)

Հիւանդանոց մը այցելելով կը գտնեմք հոն զանազան հիւանդութիւններէ (սրտի, թոքերու, ստամոքսի և այլն ցաւերէ) ատուապողներու Առիթով մը բժիշկի մը այցելելու գտցած էի՝ տեսայ որ նոյն յարկաբաժնին մէջ կ'աշխատէին երեք տարրեր մասնագէտ բժիշկներ, մէկը ակնաբոյժ, միւսը տաամնաբոյժ, իսկ մէկայլը՝ ներքին հիւանդութեանց բժիշկ։ Ցաւերու և անոնց տեսակներուն բազմաճառուն անոնց դարմանումն ալ զանազան ճիւղերու բաժնուած է։

Նկեղեցին ալ շատ մը տեսակէտներով կրնայ նմանցուիլ հիւանդանոցի մը։ Հոն կու գան բարոյական և հոգեկան հիւանդութիւններէ (հպարտութենէ, կատախրութենէ, դրամասիրութենէ) և զանազան ցանկութիւններէ տաուապողներու կու գան հոն, հասկնալու և դարմանը գտնելու իրենց ցաւերուն։

Վերը յիշուած համարին իմաստը շատ խորունկ է, անիկա կարծես թէ հայելի մըն է, որ կը ցոլացնէ բովանդակ մարդկութեան փորձառութիւնները, իսկապէս պատմութիւնն է անիկա թէ՛ հաւաքական և թէ՛ անհատական կեանքի։ Համարին մէջ յիշուած «Մահացու մարմին»ը՝ հոգիին բանտն է, «Ո՛վ պիտի ազատես զիս» խօսքը՝ բանտարկեալ հոգիին ազատութեան համար բարձրացուած աղաղակն է, իսկ «Գոհութիւն Աստուծոյ Յիսուս Քրիստոսի ձեռքով» խօսքը՝ հոգւոյն ազազակին պատասխանն է։

Ա.— «Մահացու մարմին»։

Հոս կը տեսնենք բանտարկուած հոգիի մը պատկերը։ Մարդկային մար-

մինը, միտքն ու հոգին սահմանուած չէին բանտ մ'ըլլալու, հապա պալատ մը, հոն բնակելու համար անմեղ ու անմահ հոգին որ օմառուած էր տաուածային յատկութիւններով և կարողութիւններով, հոգի մը, որ յարմար ըլլար հրեշտակներու ընկերակցութեան և Աստուծոյ հետ յարաբերութեան։

Մարդը՝ իր բոլոր մտային և հոգեկան կարողութիւններով, սահմանուած էր Աստուծոյ բնակութեան և գործածութեան համար, Աստուած մարդս անանկ նախասահմանած էր որ, չգտնուէր իր մէջ տեղ մը՝ որ աւրաշակաւ բնակութեան անյարմար եղած ըլլար։

Այս պալատը սակայն բռնադրուած է բռնակալի մը կողմէ և վերածուած բանտի մը, որ հիմա կը կոչուի «մահացու մարմին»։ Այս բռնակալը մեղքն է։ Անիկա գրաւած է մարդուս բոլոր էութիւնը ու անոր կարողութեան բոլոր սրահները, ուրոնք նախապէս ստեղծուած էին Աստուծոյ փառքին համար։

1.— Զգացումի առահը յատկացուած էր Աստուծոյ գահուն համար, հոն թափառելու, սակայն այժմ գրաւուած է չար զգացումներով, կիրքերով ու ցանկութիւններով։

2.— Երեւակայութեան առահը որ սահմանուած էր ըլլալու պատկերասրահ (Art gallery) մը այս փառաւոր պալատին մէջ՝ տաուածային փառաց նկարներուն համար, զայն լեցնելով երկինքի գեղեցկութիւններու երեւակայութեամբ, կողոպտուած է, և անոր պատերէն կախուած են այս ոչխարհի փառքին ու ցանկութիւններուն խաթարիչ նկարները։

3.— Ինսցականութեան առահը՝ հոգւոյն խորհրդարանն էր, ուր կը

թագաւորէր Աստուծոյ խնայողութիւնը յանձնուած է հիմա չար կիրքերու խորհուրդներուն:

4.— Յիշողութեան առաւել մանուած էր աստուծոյ խնայողութիւնը արձանագրելու և վերջիշու համար Անոր մեծ գործերը, սակայն գրաւուած է թշնամիին կողմէ և կը գործածուի յիշելու սին և ունայն հաճութեան:

5.— Խղճի առաւել Աստուծոյ անձնական ունկնդրութեան սրահն էր, այժմ լեցուած է սխալ կշիռներով, հին բնաշինչ եղած են Աստուծոյ Օրէնքները: Հին կը գործածուին սխալ բանալիներ, այնպէս որ, որ եւ է չար հոգի մը կրնայ անոր դուռը բանալ: Պաշտօնը բանալի վերածուած է:

Ահա այս է մարդկային էութեան խակական պատկերը:

Բ.— «Ո՞վ պիտի ազատէ զիս . . . »:

«Ի՞նչ խղճալի մարդ եմ ես ո՞վ պիտի ազատէ զիս այս մահացող մարմինէն», կրնամ գտնել ոյժ մը որ կարենայ քակել կապերս ու ազատ արձակել հոգիս, որով կարենամ վրայէս թոթաւել մեղքի ազդեցութիւնը: Ահաւասիկ այս է բանաստեղծաւ հոգիի մը սրտի խորերէն ելլող հառաչանքները: Այժմ աշխարհի ամենամեծ նիւթը այս է: Անհատներու, ընկերութիւններու, ազգերու և տէրութիւններու հոգիէն այս ձայնն է որ կ'ելլէ, «Ի՞նչ խղճալի մարդ եմ ես»:

Երիտասարդ մը կրնայ հպարտանալ ըսելով թէ՝ «Ես եմ իմ ճակատագրիս տէր», կրնամ ուզած տաննս ձգել մոլութիւններս, սակայն երբ ջանայ ինքզինքը ազատելու՝ կը հասկնայ թէ՛ դժուար է գտնուիլ, կապուած է շղթաներով և ազատուելու որ եւ է յոյս մը չկայ: Ինչպէս որ անուշադէպ Երեմիայի «Ինքզինքիս եկաւ», այնպէս ալ կ'արթննայ բանաստեղծաւ հոգին՝ միայն առաւել կը գործածուի խղճալի մարդ եմ ես»:

Այս ալ կ'արթննայ բանաստեղծաւ հոգին՝ միայն այն տանն երբ Աստուծոյ Հոգին կը խօսի իրեն, ահա այն տանն կը գոչէ. «Ի՞նչ խղճալի մարդ եմ ես»: Աշխարհի վրայ ամենակարեւոր բանը մեղքի համար մեր խղճալիութիւնը հասկնալն է: Երանի անոր, որ հասկցած է իր վիճակը և ջանացած է փախուստ տալու իր գտնուած բանտէն, ահա այն տանն պիտի գոչի իր անկարողութիւնը և միեւնոյն ժամանակ մեղքին իրմէ աւելի զօրութիւնը ըլլալը, այն տանն իրմէ աւելի զօրութիւն ոյժ մը փնտռելով պիտի գոչէ. «Ո՞վ պիտի ազատէ զիս»:

Գ.— Ի՞նչ պատասխան պիտի տանք անոր որ կ'ուզէ իր գերութիւնէն ազատուիլ:

1.— Իսկապէս փիլիսոփայութիւն մը: Կարեւոր է որ մէկը իր բոլոր կարողութիւնները գործածելով կարենայ հասնիլ կեանքի վսեմ մէկ խորհուրդին իրականացման: Մարդու՝ կեանքի իտէալ մէկ խորհուրդը ցուցնելով՝ անոր լսկ ցուցուցած պիտի ըլլանք իր գտնուած բանտին պատուհանէն դուրսի գեղեցկութիւնները և ազատ կեանքի մը վայելքները: Անիկա պիտի վերցնէ իր ոտքերը քաղելու համար, սակայն գտնուի շղթայուած պիտի գտնէ, և գտնելը փախուած, պիտի հասկնայ իր անկարողութիւնը:

Չես կրնար փրկել հոգի մը անոր ցուցնելով իտէալ կեանքի մը գեղեցիկ անաստեղծները իր գտնուած բանտէն, անոր բանալի մը պէտք է բանալու բանտին դուռը:

2.— Դաստիարակութիւն մը: Ոմանք կ'ըսեն թէ՛ ուսուցիչը կրնայ փրկիլ ըլլալ: Եթէ մարդիկ կը կրթուին՝ կը փրկուին: Տեսած ենք շատեր, որոնք ստացած են բարձր ուսում, սակայն այժմ կը գտնուին յիմարանոց, իրենց

ՀՐԱՇԱԼԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ



Մանկիկը իր մօրը պարանոցին փաթթուած, անոր գրկին մեջ կը գտնէ իր միակ հանգիստը: Անոր սիրոյ ահաւոր կերպով մէջ կը գտնէ իր միակ թաւաթիւնը: Անոր ներկայութեան մէջ բոլոր վախերն ու գողերը, կը կորսնցնեն իրենց ազդեցութիւնը:

Ծնողքը իր զաւկին հետ ապրելով կրնայ երջանիկ ըլլալ. անոր ներկայութիւնը իր մեծագոյն ուրախութիւնն է, ամէն անգամ ամէն տանն: Անոր հետ ապրելու և նոյնպէս մեռնելու յոգար է ան: Այսպէս իր բոլոր գեղեցիկութեամբը երբեք հրապոյր չունի իրեն համար, երբ զաւակը, սրտհաստորը՝ կորսնցնէ:

Բարեկամ մը, իր միակ միակթաւութիւնը կը գտնէ իր կարեկից մեծրիկին ներկայութեան մեջ: Անոր հետ,

ցանկութիւններուն մէջ բանտարկուած ըլլալուն համար:

3.— Զեւսիկոսիական կրօնք մը: Եկեղեցի յաճախելով, արարողութիւններու հետեւելով (մկրտուելով, հաղորդութիւն առնելով) կարելի է այս բանտէն ազատուիլ:

Մէկ միջոց կայ միայն, ՔՐԻՍՏՈՍ ինքն է: «Ինծի նայեցե՛ք ու փրկուեցե՛ք»: Երբ Պետրոս բանտարկուած էր, Աստուծոյ հրեշտակը եկաւ, և իսկոյն չղթանքը ինկած իր ձեռքերէն, բանտին դռները բացուեցան, և ան ազատ արձակուեցաւ:

Դիմէ՛ Երեսօր, երբ Ան գայ՝ մեղքիդ չղթանքը կ'իյնան ձեռքերէդ, բանտին դռները կը բացուին ու յաւիտեան ազատ կ'արձակուես:

Վեր. ԹէՆՏՈՐ Է. ՏԱՂԷՍՆ

Կեանքի ամենատխալը պարագաները ուրախութեան կը փոխուին, իսկ գիշերները ցերեկի: Անոր սիրով իր ներկայութեան մէջ ամպերը կ'անհետան իր հորիզոնէն: Ներկայութիւն մը զոր կը փոխէ միջավայրը և քաղցր համ մը կու տայ ու ցնծում անոր սիրակարօտ սրտին:

Աստուծոյ զաւկին համար կայ նաև այս ամենէն անբաղդասէր խօսքն՝ յիշ, սուրբ և քաղցր ներկայութիւն մը: Անիկա թէեւ անաւանանի է, սակայն այնքան իկնդանի ու վառ, զոր կու կարելի է վայելիլ առատօրէն: Անիկա կը ցրուէ բոլոր կասկածները, վախերը և մտահոգութիւնները ու կը լուսաւորէ մութ ուղին: Ո՛հ, այս ներկայութիւնը անգուցական է իր տեսակին մէջ, քանզի Անիկա հրաշալի է: Անոր մէջ կարելի է գտնել այս կեանքի կարօտութիւնները լեցնող բոլոր օրհնութիւնները: Անիկա աննման գոհարներու միակ գանձարանն է:

Յետին ծայր կարծրասիրտ մեղաւորը այս սուրբ, աստուածային ներկայութեան առջեւ երբ ինքզինքը կը քննէ, կը տեսնէ իր բոլոր ազդեց ու կործանարար մեղքերը: Նաեւ Անոր մէջ կը գտնէ ողորմութեան, անսահման սիրոյ ակը: Կը տեսնէ զԱստուծոյ իր մեծախառնութեանը ու մեծալայելութեանը մէջ: Անոր սիրող սրտին սիրոյ բարախումբները կը լսէ կարծեաւ Շնորհաց այս մեծ Աստուծոյ առջին կը խոնարհի զզջման արատաւքներով ու կտրտած հոգիով: Իր ոչնչութիւնը, պղծութիւնը, իսկ Արարչին անհափելի մեծութիւնը տեսնող մեղաւորը գութ ու թողութիւն կը գրտնէ Անոր առջեւ իր Միածնին միջոցաւ: Բարեգութն Աստուած կ'ընդունի զայն ու կտտարեկապէս կը ներէ իրեն բոլոր մեղքերը: Խղճահարութեան փոխան, սրտի խաղաղութեան

տիրացած, կ'ըլլայ ներման արժանա-
ցած երջանիկ տղաւ մը: Ի՞նչ հրաշք...

Թերախաւս ու իկաւ ֆրիստնեան
այս հրաշալի ներկայութեան ձեռք միայն
կրնայ գտնել դարման իր հոգւոյն ախ-
տին: Երբ ան կը մօտենայ ու երկար
մտմանակ կ'անցնէ այս սրբաբար ներ-
կայութեան մէջ, հոն կը տեսնէ իր թե-
րութիւնները, սխալները և անոնց
զանն սրտաճառները: Իր բոլոր յան-
ցանքները անվերապահօրէն կը խոս-
տովանի Անոր, որ սրտերու խոր-
հուրդները գիտէ արդէն, թերութիւն-
ներուն հետ կը յայտնէ նաեւ իր սրբ-
տինն բաղձանքները: Ամէն բարեաց
ողբիւրը եղող Հայրն Աստուած, իր
տկար զաւկին սիրով մօտենալով, զայն
կը քաջալերէ իր կազմութիւն խօսքե-
րով ու խոստումներով: Իր սիրոյն և
զօրութեան գաղտնի շահմարանները
ցոյց կու տայ անոր: Անիկա հաւատա-
քով լեցուած, զօրացած, Սբ. Հնգրոյն
այցելութեան ճիւղացած կանգ կ'առնէ ու
կը տեսնէ լուսաւոր ու զին՝ սրմէ քն-
թանալու է օրէ որ հետեւելով իր ան-
տեսանելի Առաջնորդին: Ի՞նչ հրաշք...

Փորձառոյ հաւատացեալը մեծապէս
կարօտ է այս հրաշալի ներհայտութեան:
Անիկա մեծ ասօցնացով կը մօտենայ
ու իր բոլոր գիտութեան թիւնները եւ
զածին պէս կը պատմէ իր Տէրօջը:
Փորձութիւնը անակնկալ փոթորիկի
մը նման իր կեանքը կը չարմէ, ինք
յանկարծակիի եկած, սպառնալի
մտանդաւոր, շուտով վիճակի մը կ'են-
թարկուի: Իր զեկը կոտուած նաւու
մը նման, երբ փորձութեան ծովուն
վրայ կը ստորուրիւրի, ալիքներու
քմահաճոյքին յանձնուած, իր արտա-
ուայի, նուազօտ աչքերը հաւատքով
Ամենակարողին կը բարձրացնէ: Անոր
խոստումները որպէս խորիւս գտնե-
լով կը կանգնի անոնց վրայ: Ընդ-
հոն՝ այս ներկայութիւնը կը բռնէ զինք


ու կը զօրացնէ զայն: Անիկա չի թո-
ղուր որ փորձութիւնը զինք կ'ըլ-
այլ զայն կ'ազատէ: Այլեւս հաւա-
տացեալը կը սորվի գաղտնիքը յաղ-
թող կեանքին: Անիկա կ'ազատի չա-
րունակական անկումներէ ու պարտու-
թիւններէ: Այս տեսական եղող սուրբ
ներկայութիւնը կը գինէ զինք ամէն օր
և ամէն վայրկեան, գիտողիւ հա-
մար գալիք փորձութիւններու: Փոր-
ձութիւնները որքա՞ն ալ սաստիկ ըլ-
լան, անիկա չի կրնար կամօք անձ-
նատուր ըլլալ անոնց, քանզի հաւա-
տացեալը իրմէ բարձր եղող ներկա-
յութեան մը մէջ կը գտնէ բաւակա-
նաչափ օգնութիւն: Այս սուրբ յարա-
բերութիւնը, զինք սուրբ կը պահէ,
հակառակ պարագային խաղաղութիւ-
նը կը խանգարուի: Այլեւս յաղթու-
թեան դրօշին տակ յառաջ կ'երթայ: Ի՞նչ
հրաշք...

Գաղց ֆրիստնեան Սբ. Հոգւոյն այ-
ցելութեան կարօտ վիճակի մը մէջ կը
գտնուի: Այս օրհնեալ խոստումը ու-
րիշ տեղ գտնել կարելի չէ, բայց մի-
այն Աստուծոյ Սբ. ներկայութեան մէջ:
Երբ սրտի կսկիծովն ու կարօտովը կը
մօտենայ հրաշալի ներկայութեան, Տէրը
կը յիշէ իր խոստումը ու կը շնորհէ
իրեն, որքան որ տեղ ունի սրտին
մէջ: Պաղ սիրտը կը լեցուի ջերմ սի-
րով կորսուած հոգիներու հանգչե-
լանման սիրութիւնը, հպարտութիւնը,
զրոմասիրութիւնը, աշխարհասիրու-
թիւնը, կը ցնդին կարծես: Տեղոյ Հո-
գին իր կեանքը կը յեղաշրջէ, ինք զայն
լման գրաւելով, որ իր իսկ իրա-
ւունքն է արդէն: Միթէ տանկա հրաշք
մը չէ՞:

Աստուծոյ ներկայութիւնը՝ հա-
ւատացեալի կեանքին իւրաքանչիւր
խաւին մէջ ներգործելով, ներքին
կեանքին մէջ զարմանալի հրաշքներ
կը գործէ: Այս անտեսանելի և սա-

կայն կենդանի ներկայութիւնը, մեծագոյն առանձնաշնորհումն է աստուածային, զոր Հայրն Աստուած Իր գաւախներուն տալապարտեան ներքեւ դրած է, ճոխապէս վայելելու: Ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ աւելի թանկագին քան Ինքը: Անհուն սիրոյն մեծագոյն ապացոյցներէն մին է աս.— Խնկիմք տալապարտի: Այս փորձութիւններով, նեղութիւններով լեցուն ճամբորդութեան միջոցին, հաւատացեալին համար Անոր ներկայութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Հոն կայ ներում, զօրութիւն, մխիթարութիւն, հրճուանք, գոհացում և ամէն տեսակ օրհնութիւն: Հոն գոյ է նաեւ Աստուած Ինքը: Անոր ներկայութիւնը կը ցրուէ երկմտութեան ամպերը, մեղքի խաւարը: Անիկա՞ բռնաբար պալատի, դռները քաղցրի, ձմեռը գարնան, արտասուքը ժպիտի կը վերածէ: Անիկա սուրբ է, քաղցր, օրհնեալ ու անբացատրելիօրէն հաճելի: Նման ուրիշ շատ մը վայելքներու, բացառելով գթուար սակայն վայելելը կարելի եղող մեծագոյն օրհնութիւնն է ան: Այս գերազանցօրէն քաղցր եղող օրհնութիւնը վայելելով, փառաբանութեան երգերով կրնանք շարունակել մեր ճամբան ու օր մը հասնիլ մեր վերջնական հանգրուանը՝ հայրենիք, ուր պիտի գտնենք միեւնոյն պիտի ներկայութիւնը: Հոն անարգել պիտի վայելենք Զայն: Ո՛հ, հոն մուտք պիտի չի գտնեն Անոր քաղցր դէմքը մեզմէ քողարկող պիղծ մեղքերը, ո՛չ ալ վրդովիչ չար մարդիկը: Այլեւս փորձութեան սառնեցուցիչ հովերը չպիտի փչեն այնտեղ: Այն խաղաղութեան ու սիրոյ վայրին մէջ սէր պիտի շնչենք, սիրոյ Աստուծոյ սիրալիր ներկայութեան մէջ: Պիտի վայելենք, պիտի ըմբռնենք Զինք այնքան առատօրէն որ մեր անյուգ ու սիրատենչ սրտերը յագեցան

ԻՐԱՆՏԱՅԻ ԱՐԹՆՈՒԹԻՒՆԸ



1. Ինչպէս ծագում առաւ.— Հոգեւոր արթնութիւնը որ տեղի ունեցաւ 1859 թուականին Իրլանտայի հիւսիսային նահանգը, Ըլքսթըրի մէջ, Իրլանտայի տարեգրութեանց մէջ նշանաւոր դարձած է: Այս արթնութիւնը նաեւ կը հայթայթէ ամբողջ պատմութեան մէջ ամենագեղեցիկ մեկնութիւններէն մէկը, թէ քրիստոնէութիւնը ի՞նչպէս յանկարծ և ուժգնօրէն կը վերակենդանանայ, թէ կերպարանափոխող ազդեցութիւն մը կը կատարէ, թէ սակայն կրնայ ըլլալ արագօրէն, ընդարձակ տարածութեան վրայ և ընկերութեան բոլոր խաւերուն մէջ: Ըլքսթըրի բողոքական համայնքները ունին սկիզբիական և անզլխական ծագում, որոնք հիմնած են գաղթապետութիւն մը մեծ ջանքով և ճարտարութեամբ, կազմելով լուսաւոր հակադրութիւն մը Իրլանտայի միւս մասերուն հետ, ո՛ւր կայ կաթոլիկ կղերներու արքայականութիւնը: Ըլքսթըրի պատմութիւնը, պատմութիւնն է՝ անաբանական կարողութեան և վաճառականական ուղղումով մտածեան, բայց մանաւանդ զօրաւոր կրօնական ձգտումներ ունեցող, քրիստոնէական հաւատալիքներու և ազատութեան ի պաշտպան ետանդով պայքարող ժողովուրդի մը:

Իրմով: Անբացատրելի ցնծում ու վայելք . . .

Ի՞նչ օրհնեալ ու սփոփարար յոյս, «Քու դիմեղ պիտի կշտանամ երբ արթնանամ» (Երկինքը) Սաղմ. 17. 15. Ամէն:

Սարք

Բ. Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

Արթնութիւնը պատճառ եղաւ ստուարութիւ մարդոց դարձին իրենց անհոգ և խաթարած կեանքերէն, սակայն իր առաջին գործը եղաւ կրկին վառել տաքեղանի խոնդն ու եռանդը, և եղաւ հաստատումը՝ փոռահեղ աստիճանի վրայ, աւետարանական կրօնքին մեծ և հիմնական ճշմարտութիւններուն:

Ոչ մէկ համբաւեալ անուն մը խառնուած է սոյն արթնութեան հետ: Անիկա սկիզբ առաւ քանի մը խոնարհ մարդոց աղօթաժողովներուն և խօսակցութիւններուն մէջ, և արագօրէն ազգային շարժումի մը համեմատութիւնը ստացաւ: Բաց ատի, 1857 - 1858 ին Ամերիկայի մէջ տեղի ունեցող արթնութեանց լուրերը վստահարար տկակալութեան հոգի մը ըստեղծեցին: Ժողովուրդը կը կարգար Ամերիկայի մէջ քարոզիչներու մասին որոնք շատ տարիներ աշխատած քիչ յաջողութեամբ, յանկարծ կը տեսնէին որ իրենց եկեղեցիները խռններում կը լեցուէին ջերմեռանդ ունկնդիրներով, իրենց տունները կը պաշարուէր անձկալից փրկութիւն փնտռողներով, թէ 12 հազար առեւտուրի մարդիկ աւմէն օր կը հաւաքուէին աղօթելու համար, նիւ Եօրքի մէջ:

Անդրէմի մէջ, Իրլանտա, քանի մը տեղեր տեղի կ'ունենային աղօթութեան ժողովներ, հետզհետէ խոր հետաքրքրութիւն ցոյց տալով, սակայն ուշագիւր քննութիւն մը երեւան կը բերէ որ, արթնութիւնը գլխաւորաբար ծագում առաւ քրիստոնեայ տիկնոջ մը (Տիկին Գոլփիլ) այցելութեամբ Պալլամենտ և շրջակայքը: Միսիս Գոլփիլ, որ շատ յատակ տեսակէտներ ունէր վերստին ծնունդի նիւթին վրայ, և օժտուած էր հոգեւոր յատկութիւններով ճշմարտութիւնը սիրով արտայայտելու, մեծ քաջութեամբ և հա-

ւատքով աշխատեցաւ մարդիկը Բրիտանոսի առաջնորդելու: Իր այցելութիւններու և թերթիկներ բաժնելու ատենները, ամէն դասակարգէլ մարդոց հետ չփման մէջ կու գար, այսուամենայնիւ շատ քիչ քաջալերութիւն կը գտնէր:

Այս ատենները տեղւոյն ամենակարեւոր ճարտարարուեստական հաստատութեան մէջ աշխատող երիտաւարդ մը կար Երեմիա Մաքգիլքէն ունենով: Այս երիտասարդը օր մը տեսաւ թէ Միսիս Գոլփիլ կը խօսէր տիկնոջ մը հետ, որ աւելի հաճոյք կը զգար նախասահմանական վարդապետութեան վրայ վիճարանելէ քիչ կենսական և անձնական քրիստոնէութեան: Հսեց որ Միսիս Գոլփիլ խօսակցութիւնը օգտակար ուղի մը բերելու համար կ'ըսէր. «Միսիս, դուն տակաւին երբեք չես ճանչցած Տէր Յիսուսը»: Այս խօսքերը ինչ ազդեցութիւն ալ ըրին տիկնոջ վրայ, անոնք նետի պէս մխրճուեցան Մաքգիլքէնի սրտին: Ըմբռնեց որ այն խօսքերը իրեն համար շատ յարմար էին: Երկու շաբաթ, գիշեր ու ցորեկ խաղաղութիւն չունէր: Յետոյ զայն գտաւ Բրիտանոսի մէջ: Առաջին մարդը որ դարձի բերաւ իր բարեկամը Երեմիա Մէնիլէն էր, և այս երկուքը սկսան միասին աղօթել ուրիշ երկու երիտասարդներու հետ, ձօն Ուալլէս և Բոպէրթ Գարլայլ: Այս շորսը ըսկսան աղօթաժողովը պզտիկ զպրօցի մը մէջ Անդրէմ, որ կոչուեցաւ Հաւասացեալներու Հաղորդակցական Ժողով: Ամիսներ ամիսներու ետեւէն անցան, գաղափարակիցներ միացան իրենց բարեխօսական աղօթաժողովին, ո՛ւր ամէնքը միասին կը գօտէմարտէին ուղօթքով և կը յաղթանակէին: Մաքգիլքէն ուշի ուշով կ'ուսուսնասիրէր Սբ. Գիրքը: Կ'օգտուէր նաեւ ձորձ

Միւլլերի կենսագրականը կարգաւորվւ
1858 ին զարմանալի դարձեր տեղի
ռենցան: Դարձի եկողներուն թիւը
հետզհետէ կ'ստուարանար: Արթնու
թեան կրակը սկսաւ բոցաւառիւ:
Մարդիկ կ'աղաղակէին գթութիւն
բացօթեայ ժողովներուն մէջ: Շատերը
կ'աղօթէին, երբեմն ամբողջ գիշեր:

Արտակարգ եռանդով մը շարժու
մը տարածուեցաւ Ահօկհիլ և ուրիշ
տեղեր: Շատեմարաններու, դպրոցներու
և, սննդական տուներու մէջ ժողովներ
տեղի կ'ռենցային դարձի եկողներուն
կողմէ, և հոժ բազմութիւն ներկայ
կ'ըլլար: Պալլեմէնտայի քաղաքը ամ
բողջութեամբ կարծես յանկարծ ար
թնցաւ: Այս ամօթիւ քարոզիչ մը կը
գրէ. «Նախապէս դժուարութիւնը ժո
ղովուրդը եկեղեցի բերել էր, այժմ
դժուարութիւնը ժողովուրդը եկեղե
ցիէն դուրս բերել է»: Վերջին օրն
ուրեման աղօթքը կրկին ու կրկին
կը մատուցուէր, սակայն ամէն անգա
մին աղօթքի անդիմադրելի խնդրանք
ներ կը պառթկային, կամ ապաշխա
րել ուզողի մը իր մեղքերէն ազատե
լու աղաղակը ականջի կը հասնէր, և
այդ պատճառաւ ալ ժողովը ստիպման
տակ կ'երկարէր մինչև տառապան
կանուի ժամերը:

Գօննօսի սահմաններուն մէջ հա
րիւր աղօթածողներ տեղի կ'ռենե
նային ամէն շաբաթ: Շուկայէն դար
ձող խումբերուն հայհուհները որ այլ
եւս զազիր դարձած էին, փոխարինուած
էին պարզ բայց տպաւորիչ երգերով
սրտնցմէ նշանաւորն էր, «Ի՞նչ է յուրը»:

«Երբ հանդիպինք իրարու, դու և կ'ըսես
Ի՞նչ է յուրը, ի՞նչ է յուրը,
ինչքեմ ի՞նչ է օրուան նիւթը, օրակարգը,
Ի՞նչ է յուրը, ի՞նչ է յուրը:
Ո՛հ, ես ունիմ բարի յուր պատկեր,
Իմ Փրկիչս ըրած է ըստ անհե ըսեմ,

Յաղթած դժոխքի եւ մահուան —
Այս է յուրը, այս է յուրը:»

Մուգիգ հօլի և թատրոնի անպի
տան երգեր բաւարովին խառարեցան
«Ի՞նչ է յուրը» երգով: Մր. Մ. Հ.
Սմիթ՝ Ե. Ք. Ընկերութեան կողմէ
երբ այցելեց Ըլեսթըրը, տեսածը
պատմելով կ'ըսէ. «Ուր որ կ'երթայի
կը լսէի «Ի՞նչ է յուրը»: Կարծես թէ
ամէն մարդ զայն կ'երգէր: Եթէ չո
գեկաւքի տոմսով գնելու երթայի,
տոմսակալաճառը կ'երգէր:—

«Փրկիչս մեռաւ Գողգոթայի վրայ,
Այս է յուրը, այս է յուրը»:

Կամ եթէ ոստիկանի մը հարցնէի
ճամբան, ինձի ցոյց տալէն վերջը կը
շարունակէր երգել:—

«Իր գործը կը վերականգնանայ
անհե կողմ,
Այս է յուրը, այս է յուրը»:

Ուրիշ ականատես մը կը գրէ.
«Ամբողջ քաղաքը եռուղեւի մէջ էր,
բողոք ընտանիքներ երկու երեք գի
շերէ ի վեր անկողին մտած չէին:
Երկվեցեակ մը տուներէն գիշեր ու
ցորեկ կը լսուէին մեղքի խոր համոզ
ման տակ զանուշներու կողմէ աղա
ղակներ ի խնդիր գթութեան, կամ ա
ղօթքի ձայներ և կամ անուշ եղա
նակներ՝ երգերու: Կարգ մը փողոց
ներու մէջ տուներու առջեւ, ամէն
տեղ մարդոց բազմութիւններ կը կե
նային կամ աղօթքով զբաղած կամ
փառաբանութիւն երգելով: Անգլիա
յէն, Սկոտլանդէն և Իրլանտայի շատ
մը մասերէն մարդիկ կը շրջէին Պալ
լեմէնտայի լայն և նեղ փողոցներուն
մէջ, որոնց մէջ կը տեսնուէին եկե
ղեցականներ, միաբնակներ, Կ. դպրո
ցի ուսուցիչներ, հետաքրքիր առեւ
արականներ այս զարմանահրաշ գոր
ծերուն ականատես ըլլալու անձամբ:
(Շարունակելի)

ԵԿԵՂԵՑԻԻ ՄՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՐ

Ստորև կը քարգմանենք զայն իր այժմէ-
ականութեանը եւ շահեկանութեանը համար:

... Մենք կ'ընդունինք կտրելի-
ութիւնը հասանքէն քշուելու, որ միշտ
պատրաստ է, հետեւաբար կ'ուզենք
մղել մեր եկեղեցական պաշտօնեանե-
րը եւ ժողովուրդները ամենուրեք, տե-
ւական եւ շնչառած ջանքեր թափե-
լու, եկեղեցիներուն մէջ խորունկ հո-
գեւորութիւն յառաջացնելու: Մեր
ժողովուրդները պէտք է քաջալերել,
որ ունենան կանոնաւոր Սբ. Գիրքի
սերտողութեան եւ անձնական աղօթքի
սովորութիւն, եւ ընտանեկան աղօթքի
շարունակական վարժութիւն, որ մեր
տունները պահուին տիրապէս քրիս-
տոնիս:

Նոյնպէս պէտք է մեր եկեղեցի-
ները պահուին հոգեւոր Պէտք չէ
թոյլատրել որ՝ ծրագրով եւ զգոյնա-
կանութիւնով փոխարինուին հին ժա-
մանակներու հոգեւոր պաշտամունք-
ները եւ Աստուածուստ զրկուած արթ-
նութիւնները: Մեր ժողովուրդները
պէտք է շարժին մինչեւ իրենց հոգի-
ներուն խորքերը Խօսքին քարոզու-
թեամբ եւ գիտակցին անհրաժեշտու-
թեանը Աւետարանի քարոզութեան՝
ամէն տեղ, հոգիներու փրկութեան
համար:

... Որպէս սրբութեան հաւատա-
ցող ժողովուրդ, պէտք է անվթար
պահել թէ՛ գործնականօրէն եւ թէ՛ ե-
րեւութապէս, Սբ. Գրային գիրք մը
աշխարհիկ կենցաղի հանդէպ, յետոյ ըլ-
լալ անտեղիտալի, կասկածելի զուար-
ճութիւններու հանդէպ, ինչպէս են
թատրոն, սինէմա, պար, թղթախաղ
եւ այլն...

Պէտք է փնտռենք բարեկամեցո-

ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՆՐ

Ասկէ քանի մը տարիներ առաջ,
քաղաքի մը մէջ կ'ապրէր մարդ մը:
Ան անդամ էր տեղւոյն եկեղեցւոյն
եւ մեծ անուն ունէր այդ գաւառին
մէջ: Բայց ան շատ ազահ եւ դրամա-
սէր էր եւ իր պարտքերը վճարել չէր
սիրեր: Ունէր աղջիկ թող մը՝ ինչը
տարեկան, որ շատ խելացի աղջիկ էր
եւ Աստուծոյ գաւազ: Ան ալ լսերէր
որ մեծ հայրիկը շատ դրամասէր է, եւ
իր պարտքերը վճարել չէր սիրեր, եւ
տախտ մեծ ցաւ կը պատճառէր իրեն:

Առաւօտ մը երբ սեղան նստած
միտսին թէյ կը խմէին աղջիկը ըսաւ.

— Մեծ պապա, ես այս գիշեր ե-
րազիս մէջ տեսայ քեզ:

— Զիս երազիդ մէջ տեսար, ը-
սէ տեսնեմ ի՞նչպէս տեսար:

— Երազիս մէջ տեսայ, որ դուն
մեռած էիր: Եւ տեսայ հրեշտակներ
եկած էին որ քեզ երկինք տանին: Ա-
նոնք իրենց թեւերուն վրայ տոն
քեզ եւ թռան դէպի վեր, թռան շատ

զուրկուն, միւս բոլոր քրիստոնեայ
մարմիններուն եւ անոնց համագործակ-
ցութիւնը, ժողովուրդներուն ծառա-
յելու համար, ոտանց զոհելու մեր հա-
մոզումներէն: Մենք կը յանձնարա-
րենք ամէն ջանք թափել՝ ցոյց տա-
լու մեր բարեփոխմանութիւնը, ամե-
նուն հանդէպ: Մեր պատգամն է «սէր
եւ ծառայութիւն բոլոր մարդոց»:

Կը յորդորենք մեր հովիւները որ
ուշադիր ըլլան անդամներ ընդունելու
ատեն... , նոյնպէս խնամք տանիլ
անհոգ եւ անտարբերներուն, ինչպէս
կ'ընէր Բարի Հովիւը կորսուածը վե-
րադարձնելով փարախը:

«Հերոյս ալ Հօլիմեա»

բարձր: Բայց յանկարծ կանգ առին և սկսան շրջիլ առանց վեր բարձրանալու: Յետոյ դարձեալ վար իջան և քեզ դրին գետնի վրայ: Հրեշտակներէն մէկը քեզի ըստ. «Բարեկամ, դուն շատ ծանր ես մեզի համար, մենք քեզ չենք կրնար առնիլ երկինք: Քու պարտքերդ են որ քեզ այնպէս կը ծանրայնեն: Եթէ հաշիւդ մաքրես քու պարտականորդդ հետ, մենք չուտով կուգանք և դարձեալ կը առնինք քեզ:»

Ծերունին շատ յոգուեցաւ փոքրիկին տեսած երազով: Ան հասկցաւ որ իր ազահուծեան պատճառով ինքը մեծ վատնդի մէջ էր և որոշեց վերջացնել իր հաշիւները: Ան իսկոյն գնաց իր սենեակը ու խնդրեց Աստուծոյն որ ներէ իր մեղքը և ազատէ զինքը ազահուծեան մեղքէն: Յետոյ գնաց իր պարտականորդուն մօտ և վճարեց բոլոր պարտքերը: Եւ այդ օրէն սկսեալ ան շատ ձշգապահ էր, միշտ ժամանակին կը վճարէր և երբեք չէր ուշացներ: Շատ չանցած նա իսկապէս մեռաւ և հրեշտակները տուրին զինքը երկինք առանց որ եւ է գթութեամբ հան, որովհետեւ այլեւս պարտքերով ծանրացած չէր:

«Որ ունիցի տկանջս լսելոյ՝ լուիցէ»:

Կէսը ուժին որ prsortեց
կը դողացնէ աշխարհը դեռ,
Կէսը դրամին, գոր կ'ապառեն
Ապարանքներ, մարգարաքներ,
Եթէ տուէր ազատելու
Խեղճ մարդկութիւնն իր անկուսէն
Զինարանի եւ բերդերու
Պէտք չէր մնար վստահօրէն:

ԼՕՆԿՖԷԼԼՕ

Պէտք է միտ յիշել թէ մարդիկ կորսուած են, երկինքի նամբն շատ հեռացած: Քրիստոս միայն զանոնք եւ կրնայ բերել:

Ա. ԱԼԵԿՍԱՆԴՐ

ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինեվանառին ճամակը Սասանային,
Որուն կը պատասխանէ
Գծովսի Իսխանը

Մեծայարգ Տետր Ստանայ, Պատիւ ունիմ յայտնելու ձեզ, որ ես խմիչքի տուն մը բացած եմ, ամէն պատրաստութիւն տեսած եմ, որ հոն ծախեմ օղի, գինի, զարեջուր, ուհիսքի, շամբանեայ և ամէն տեսակի արքեցնող բմպիլիք: Կ'առաջարկեմ որ ինծի հետ ընկեր ըլլաք, որովհետեւ այնպէս կը դատեմ, որ մեր միտան գործակցութիւնը, երկուքիս համար ալ հաւատարմապէս շահաւոր կ'ըլլայ, թէպէտ մեր շահերու տեսակները տարբեր են իրարմէ: Ես կ'աշխատեմ որ խիմ մարդաց զրամները, իսկ անոնց մարմինը, անձը և հոգին ձեզի թող ըլլայ:

Ինծի բերէ՛ք աշխատասէր, պատուաւոր և զգաստ մարդիկ, և ես կ'ընեմ զանոնք արքեցնողներ, աղքատներ և մուրացկաններ:

Բերէ՛ք ինծի մանուկներ և ես չուտով յօդս կը ցնդեցնեմ այն լուսագոյն յոյսերը, որ անոնց ծնողքը ունին իրենց վրայ: Բերէ՛ք ինծի հայր կամ մայր, աւելի լաւ կ'ըլլայ երկուքը միտան, և ես չուտով կը ցոյնեմ անոնց մէջ այնպիսի անհամաձայնութիւն որ ծնողք անէծք և տարափ կը դռնան իրենց զաւակներուն համար:

Բերէ՛ք ինծի երիտասարդը և ես չուտով կ'ապակոնեմ անոր բարոյականը, կ'առնեմ առողջութիւնը, կը քայքայեմ իր ուժերը, կը կործնեցնեմ կիսնքը, կը խիմ անոնցմէ երիտասարդութեան ամենազեղեցիկ յոյսերը և ամենամաքուր ձգտումները:

Բերէ՛ք ինծի զեռատի աղջիկը,

մտքուր և անորոտ, շուտով կը խլեմ անոր մանկական անմեղութիւնը կ'անպատուեմ իր մարմինը, կը փռըրեմ իր տոկունութիւնը և կը վերադարձնեմ ձեզի կործանուած, և նէ կը դառնայ ուրիշներու կորստեան համար իբր լաւ գործիք:

Ինծի բերէ՛ք արհեստաւորն ու բանուորը, հասաւտ խօսք կու տամ ձեզի, որ անոնց ծանր աշխատութիւնով և քրտինքով շտաճ գրամները իմ ձեռքիս մէջ միջոց կ'ըլլան տարածելու ազգատութիւնը, յանցանքները, անոնց մէջ տգիտութիւնը, որոնք ժամանակ մը երջանիկ էին:

Ինծի բերէ՛ք քրիստոնէութիւնը դաւանող մարդը և կամաց կամաց բնաջինջ կ'ընեմ իր սրտին մէջէն բարեպաշտութեան ամէն զգացում, կը միտցնեմ անոր խղճմտանքը և անով ամէն փափուկ զգացումները, և մինչեւ իսկ գործիք կը չինեմ անոր անհաւատութիւնը և անբարոյականութիւնը մարդոց մէջ տարածելու: Ասիկա մեծ յաղթութիւն կ'ըլլայ ձեզի համար:

Բերէ՛ք ինծի նոյնպէս քարոզիչը, անոր օգնութիւնով ես շատ լաւ կըրնամ նախատինք բերել եկեղեցւոյն վրայ, և մինչեւ անգամ կրօնքը զըզուելի դարձնել մարդոց համար:

